


ᠠᠨᠢ ᠪᠣᠭᠤ ᠵᠡᠳᠦ

[illegible]

LEAF 41

4 12 8 17 12 7 6

Դուրս չացած լրագրաց ճան ու
ծախքը խմբագրությունից վրայ :
Լրագրոյս գեղարքեպետ Զատիկ
կամ որ եւ ինչ գրու իմ խորագիր
— Տնօրէնիս պիտի ուղարկէ : Դաւա-
թիա Սանտրոնքուար Ճաւառէօ ինչ
1938, Երօր իմն, Մատիսն գրասեն-
եակը :

Կարնո ծախքը պէճառած ճո-
ւղ Կոնդուստիւր :

ՓԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՅՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 29 ՅՈՒՆԻՍ

ቶሊጊሁቶሊካህን

Պատերազմն հետզհետե կը մեծ-
նայ և երկու կողմէն պատրաստու-
թիւնները կը շարունակեն : Յունիս
26 թուականի Բ. Դուռն եկած հեռագ-
րալուրերը կը ծանուցանեն թէ Սեր-
վիացիք անցեալ ուրբաթ օր Եֆէնի-
Պաղարի ամրութիւններէն Էսքի—Քի-
լիսայի ամրոցին վրայ յարձակելու են ,
բայց երկու ժամ կ'ուռուլէ ետև ետ
բաշտերը են՝ հինգ հարիւրի չափ
մեռեալ և շատ մը հրացան թողոյլ :
Պայտօնական հեռագրալուրն Օսման
եան զօրքերէն միայն մէկ մեռեալ
մ'է երկու վիրաւոր կը ծանուցանէ :
Թշնամոյն բարձրաւանդակի մը վրայ
դրած թնդանօթը կայսերական զո-
րաց մէկ ուռմբով ջախջախել է : Սո-
րուհայի կողմն ալ Սերվիացիք Օս-
մանեան ամրոցներուն դէմ ամրու-
թիւններ շինելով երկու թնդանօթ
հաստատած էին , բայց Օսմանեան
զօրքերը թշնամոյն վրայ յարձակե-
լով անոր ամրութիւնները գրաւել ,
և բազում զէնք թնդանօթ և պաշար
գրաւել են : Սերվիացիք երկու հա-
րիւրէն աւելի մեռեալ թողել են ,
իսկ Օսմանեան զօրաց կորուստն՝ ըստ
պաշտօնական հեռագրին՝ վեց հօթին
մեռեալ և քանի մը վիրաւոր միայն է
եղել :

Թշնամուդն հրատարակած հեռագրորդերն ալ բնականաբար յալթութիւնն անոր կողմը կը ներկայացնեն ՝ Գարատաղի իշխանն ալ Բ. Գրան դէմ պատերազմ հրատարակեց ՝ Եւրոպական թերթերու մէջ հրատարակուած հեռագրորդեր կրսն թէ Պոնտիոյ ապստամբք Միլան իշխանն իրենց դաւառին թագաւոր հրատարակեր են , Հէրսէքի ապստամբք ալ նոյնն ըրեր են Գարատաղի իշխանին համար ՝ Տասնեւթիւ տարեկանէն մինչև 60 տարեկան Գարատաղացոյ ամենն ալ ի դէն հրաւիրուած են , և յիշուա իշխանին բացակայութեան ժամանակ երկրին վարչութիւնը ծերակոյտն ատանձնած է ՝ Ռուսիոյ վարչապետ Մեծ—դուքսը Ֆեռէյէֆ զօրավարին հետ Սերվիացոց բանակն հասած է ՝ Ասկէ կրնայ հասել իր աստիք առանձին չեն կրնար ըլլալ , և հարկաւ ուրիշ Ռուս կամաւորներ և օգնութիւններ ալ եկած ըլլալու են հոն ՝ Օսմանեան սահմանադրոյն վրայ յարձակող Սերվիացի կամաւորաց խումբերէն միոյն հրամանատարը Տուշի անուն քահանայ էր ՝ Սերվիական բանակին հրամանատար Չէրայէֆի Ռուս զօրավարին շինած պատերազմական ծրարին համեմատ Սերվիացիք Նիշի մօտ Օսմանեան զօրաց վրայ պիտի յարձակին

եղեր : Միւս կողմէն Չաք զօրավարին ներքեւ եղած Սերվիական բանակն ալ հարաւային արեւմտեան կողմէն կիրճերը բռնաբարելով Բրիզլին տի մէջ Գարատաղյաներուն գլխաւոր զօրաբանակին հետ պիտի միանայ եղեր : Չաք զօրավարին բանակը 22000 հոգի և Գարատաղյաները 11000 հոգի ըլլալով , մեծ զօրաբանակ մը պիտի կազմէին : Տրէնայի Սերվիական զօրաբանակն ալ 30000 զօրք Պոսնա—Մէրայի վրայ պիտի քալէր . իսկ 7000 ի չափ մնացեալ Գարատաղյաններն Հէրսեքի մէջ պիտի գործէին : Բայց կըսուի թէ այս ծրագիրն Օսմանեան զօրաց հրամանատարներուն ձեռքն անցեր է , յորմէ Սերվիացիք «Գարհուրներ» են եղեր : Երկու Ռուս զորագլուխներ Գարատաղ հասեր են , ուր Ռուսաց կայսրն ալ իւր անձնաւորական ծախիւք զինուորական հիւանդանոցի մը բոլոր պիտոյքը զրկեր է : Ռւբլաթ օրը Պոսնիոյ և Հէրսեքի կայսերական զօրաց հրամանատար Ահմէտ Մուխթար փաշայէն Բ. Դուռն եկած հեռագրաւոր մը Եէնի—Պազարի զօրաբանակին հրամանատար Մէհմէտ Ալի փաշային մէկ յաղթու թիւերը կը ծանուցանէ : Մէհմէտ Ալի փաշա Սերվիացեղ խալով անուն գիւղին վրայ յարձակեր է : Թէև քրտան օրէ ՚ի վեր այն կողմերն եկած անճընները ճանապարհները ճախին գարձուցած ըլլալով , թիւանօթաց անխները ցետին մէջ կը խրէին , Բայց կայսերական զօրքը մեծ աշխատութեամբ յառաջ գնացեր է , ուրիշ աւտան 3 ժամու ճանապարհ մը 10 ժամէն կտրելով : Պատերազմը խիստ սաստիկ եղեր է . Օսմանեան զօրքերը թիւանօթները ձեռքով քաշելով պատերազմի դաշտը տարեր են : Մինչև գիշերուան ժամ 9 պատերազմ եղեր , և Սերվիացիք երեք հազար մեռեալ և վիրաւոր թողլով ետ քաշուեր են : Օսմանեան զօրաց կորուստը 30 մեռեալ և 187 վիրաւոր եղեր է : Մէհմէտ Ալի փաշա տակաւին այն կողմերն է , կրէ ձեռագրաւորին թուրքերէն ընտաղելը , թէ և լա թիւեր կը թիւարդանան թէ խալօր գրաւեր է :

կայսերական կառավարութիւնը պատերազմին ասպարէշը զօրք զէնք և մթերք հասցնելու համար մեծ պատ-
րաստութիւններ կը տեսնէ։ Մանա-
ւանդ կայսերական թնդանօթարանը
կարգէ դուրս գործօնէութեան մը
մէջ է։ Մեծ—էպարքոսը, Բարձր-
Միտհաթ փաշան և զլիսաւոր նախա-
րարք ստէպ հոն կը գումարին և պա-
շարման թնդանօթներ դրկել կուտան։
Կը կարծուի թէ նշիլ կայսերական
զորաբանակը քիչ օրէն յարձակողա-
կան դիւրը պիտի բռնէ։ Եւ եղած
պատերազմութիւնները թշնամոյց մեծ
հարուած մը տալու դիտում ունին։
Պատերազմական գործոց նախարար
Սէրտար—էքրէմ Սպախլ փէրիմփա-

չայլն՝ Նիշ հասնելուն լուրը տակաւին
չեկաւ . բայց անոր ժամանելէն ան-
միջապէս վերջը հարկաւ պատերազ-
մը Նիշի կողմէն ալ ամենայն սաստ-
կութեամբ պիտի մղուի : Սերպիլիացիք
Գանտուրի կայսերական նաւատորմին
ռմբակոծութեան դէմ Պէլլիւրտը
պաշտպանեալու պատրաստութիւններ
դր տեսնեն :

Սլավ իշխանութեանց այս պատե-
րազմը թէ և բոլորովին անախկալ
չ'էր, ընդ հանրապէս կարծել կուտայ
թէ առանց օգնութեան յոյսերու
ձեռնարկուած չէ, թէպէտ պաշտօ-
նական Ռուսիա՝ կայսեր բոլորաիքէն
սկսեալ՝ խաղաղական, յայտարարու-
թիւններ կ'ընէր ։ Միլան իշխանն իւր
պատերազմի յայտարարութեան մէջ
դաշնակից կը ցուցնէ իրեն Գարատա-
ղըն, որոյ իշխանն իւր «Պեղագնեայ
եղբայրը» կը կոչէ, Ռումանիոյ և Յու-
նաստանի աջակցութիւնն ալ կը խոս-
տանայ իւր ժողովուրդեան, բայց անոնք
մինչև հիմայ չեղջըութենէ չ'ստացոյն
լու յայտարարութիւններ միայն կ'ը-
նեն և այնպէս ալ կը շարժին ։ Ռուսիոյ
խօսքը չ'ընէր, սակայն յայտնի է որ
Ռուսիոյ Սլավոնան մասն ալ Մերովիաց-
ւոց և Գարատաղցւոց համակիր է, և
կրնայ ըլլալ որ տէրութիւնն ալ վեր-
ջապէս դործի վրայ հանէ ։ Բաւ լրագ-
րաց ոմանց, Ռուսիա Մերովիոյ ներկայ
հաղն երաշխաւորներ էին ։ Որ ալ ըլլայ
պատերազմին վախճանը, բայց կար-
ծենք այս երաշխաւորութեան ալ
հարկ չ'կայ, քանզի արդէն Մերովիա
փարիզի դաշնադրութիւնն ստորագ-
րող բոլոր տէրութեանց երաշխաւո-
րութեան ներքև կը դնուին ։ Միայն
թէ ներկայ պարագայները կրնան նոյն
դաշնադրութիւնն իսկ վտանգի են-
թարկել, քանզի պատերազմին վախ-
ճանը դեռ անստոյգ է ։ Հակառակ
մեծ տէրութեանց ոմանց այժմեան
ձեռնպահութեան հատարակաց կար-
ծիքն, և գուցէ կայսերական կառա-
վարութիւնն իսկ կը կասկածին որ
պատերազմին ասպարէզը կընդլայնի-
թուրքիոյ մէջ հայրենասիրական բու-
ռըն եւեւովք բոլորքոքցաւ, և ամեն
կողմէ նպաստներ ու օգնութիւններ
կը տրուին Տէրութեան ։ Պաղտասի
ընդհանուր կառավարին իւր մէկ
ամառական օգնութեան յատկացուց, և
քանի մ'աւուր մէջ երեք հազար
քսակ հաւաքեցաւ ։ Մայրաքաղաքիս
մէջ նախարարք հարիւրաւոր ոսկիներ
և արծաթ նուիրեցին, և իրենց կա-
ռաձիգը ընտիր ձեռնորուն մէկ մասը
պատերազմի պաշտօնատուրը ղըրկե-
ղին թխնաօնթ քաչիբու համար ։

Եւրոպական տէրութիւնք առ այժմ պարզ հանդիսատես կը լլնան: Անգղիա կը յայտարարէ իւր նախարարաց ի լրագրաց միջոցաւ թէ քանի որ պատերազմն Օսմանեան կառավարութեան ի իւր հզօրանիք իշխանութեանց մէջ է՝ չպիտի միջամտէ, քան

դի փարիզի դաշնագրութիւնը թէ և թուրքիա արտաքին յարձակմանց դէմ կ'երաշխաւորէ, բայց ներքին պատերազմի դէմ չ'երաշխաւորեր։ Աւստրիական լրագրիւրը ալ ներկայ պատերազմին ծանրութիւնը կը խոստովանին, և կ'ըսեն թէ անոր սահմանափակ ֆլալը մէկ կողմէն Ռուսիոյ և միւս կողմէն Անգլիոյ ընթացքէն կախում ունի։ Վառօղը բռնակեցաւ, և իրաւաւոր կընայ կասկածուիլ որ հրդեհը մեծ ըլլայ։

Ահաւասիկ Միլան իշխանին պա-
տերազմի յայտարարութիւնը :

“Առ սիրելի ժողովուրդ իմ.

“Այն օրէն ՚ի վեր որ Պոսնիակ
Հէրսէք ոտք երան, Սերվիդի վիճակն
անտանելի եղաւ : Օրէնք գրկէք մեզ
զգուշանալ այն ամեն բաներէ՛ր որք
կրնային մեծ տէրութեանց և Բ. Դը-
րան ձեռնարկած խաղաղարարութեան
գործին արգելք ըլլալ : Բայց և այն-
պէս թուրքիա երկաթէ շրջանափով
մը պատեց մեր սահմանները՝ թիմօք
գետին բերնէն մինչև Տրինայի բե-
րանը : Ահա տարի մ'է որ առանց
Բ. Դրան հետ պատերազմ ունենա-
լու՝ պատերազմի հետևանք եղող ա-
մեն ծանրաբեռնութիւնները կը կը-
րենք : Եւ չէադրեցայ սակայն երաշ-
խաւոր տէրութեանց խորհրդոյն ան-
սպէ՛հ, և մեր զգացմանքը լռեցու-
ցինք :

“Առանց այս տրամադրութեան
ներն ՚ի հաշիւ առնելու, Թուրքիա
յամսուութեամբ շարունակեց զոր-
քեր կոտել մեր դուռը: Պայքար
զուգներ, Զերքէշներ, Արնաթուա-
ներ, Ասիոյ բարբարոս քիւրտեր, ա-
մեն տեսակ վայրենեաց ջոկերնք մեր
սահմանազուխը խռնեցան՝ պատ-
րաստ մեր հայրենիքն սապատակելու
և աւերածովք ծածծելու: Այլ էջինք
կրնար առանց վեհերոտութեան յա-
րատելը մեր չափաւորութեան մէջ:
Վտարանջեալ դաւառները խաղաղե-
լու և միտնդամայն մեր երկիրն այս
անտանելի վիճակէն ազատելու ան-
վերելի միջոց մը յոյց տուինք կայ-
մերական կառավարութեան: Յայտա-
րարեցինք նաև թէ խաղաղութեան և
մարդկութեան շահուն համար չենք
վարանիլ սպառնաբերալ դաւառները
մոնեն: Եւ հիմա Բ. Դրան կարճէն
միայն կախում է արիւնհեղութեանը
դադրեցնելը:

“Եղբա՛ր, լի մտահոլ թեամբ
կանցնեմ ձեր գլուխը : Մեզ հետ կը
քալեն մեր եղբուրք, արի Գալատադ
ցեք, իմ գիշադնեայ ներքու-եղբորս
հետ : Հէլաճքի և Պանիոյ քաջ որ-
դերը մեզ հետ ձեն : Մեր ֆուդար
եղբարը մեզ կ'սպասեն , և Յուսաֆ
տանի աղնին որդիք չպիտի յամեն
մեզ հետ միանալ : Յարդեցեք՝ Էրայի
միասնութեան սահմանն , որպէս

գի թագաւոր կայսեր կառավարու-
թիւնը մեզ դէմ բնաւ դաժնաւոր
պատճառ չունենայ: Մեր շնորհա-
պարտ ենք անոր՝ մեր Հէրսէքցի եղ-
բարց շնորհած ազնիւ պաշտպանու-
թեան համար:

«Առ զօրս իմ»
«Օ՛ն, յառաջ խաղացէք, քանզի
իմ, սիրելի՛ զօրականք իմ, քաղենք
մեր ամենուս թշնամեայ դէմ, ի
պաշտպանութիւն սուրբ իրաւանց
հաւատոյ, արդարութեան և հայ-
րենեաց:»

ՄԻԼԱՆ ՕՊԵՆՈՎԻՉ
Կեդրոն հրամատարու-
թեան ի Պէլկրատ

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզ 7 յուլիս.
Ժողովը ձեր գաւառին երեսփոխան
Պ. Բէյրլու Պրնապարթեանին ընտրու-
թիւնն ոչնչացուց:

Վիեննա 7 յուլիս.
Աւստրիոյ կայսրն Անտոնի կոմսին
հետ այս իրիկուն ընթացող գնաց, ուր
վաղը Ռուսիոյ կայսրը հետ պիտի տե-
սակցին:

Պէրլին 7 յուլիս.
Ռուսիոյ կայսրն այս առաւօտ ժիւղէն-
հէյոյն ընթացող գնաց:

Գերմանիոյ կայսրն յուլիս 12 ին Ռու-
սոյ Միխայիլ մեծ դուքսին այցելութեան
պիտի երթայ ի Պատեն և յուլիս 19 ին
ալ իջի մէջ Աւստրիոյ կայսրը հետ պիտի
տեսակցին:

Վիեննա 8 յուլիս.
Երկիրը մեծ անհամբերութեամբ Ռու-
սիոյ և Աւստրիոյ կայսրաց տեսակցու-
թեան արդիւնքին կ'սպասէ: Երկու կայ-
սերը զիրար տեսած ժամանակին երեք
անգամ սրտագեղ սիրով համբուրեցին:

Անտրաքի կոմսը, Կորչաքոֆ իշխանն
և Պ. Նովիկով, որք նշանակւոյն ընթացող
կը գտնուին, ի խորհուրդ գումարեցան:
Խաղիւրը կը յաւան թէ տէրութիւնը
կատարեալ չ'ըլլալով պիտի պահեն
Արեւելց զօրքերուն մէջ: Այսպիսով մեծ
պետութիւն մը կ'ազդուեալուն դէմ են և
Թուրքիոյ ամբողջութեան և միութեան
անվերջ պահուիլը կուզեն:

Խաղիւրը զինուորական մասին խմբ-
բաղ իրենք՝ պատերազմական զօրքերու-
թեանց վրայ գրած ժամանակին՝ Օսման-
եանց ռազմավարութիւնն ու քաղաքա-
նը կը գովեն:

Ֆրանչիսկո Յովսէփ կայսրը վաղը
մեր քաղաքը պիտի դառնայ:
Սէրայիվոն կը գրեն թէ Օսմանեան
զօրքերը պայծառ յաջողութիւն մը ձեռք
բերին Եւփորէն անդին:

Վիեննա 9 յուլիս.
Ռոտով կայսերադուռը ներկայ էր եր-
կու կայսերաց առաջին տեսակցութեան,
որ ամենակատարեալ համաձայնութեամբ
բաժնուեցան իրարմէ:

Կայսրը Վիեննա հասնելէն ետեւ, իրեն
յարգանք մատուցանելու և խաղաղու-
թեան մասին հաստատակցութեան
թիւնը յայտնելու համար ներկայացեալ
երեսփոխաններուն այսպէս պատասխա-
նեց: Տեսնա՞ր, ես խիստ դժեմ իմ քրո-
նակներու թեմէս, կրնա՞ք անդորրամիտ
ըլլալ:»

Ռոտովայիս 8 յուլիս.
Րէյնլանտի մէջ եղած խորհուրդէն
ետեւ Աւստրիոյ և Ռուսիոյ կայսրերը ժամ
3 ին (ըստ տաճկ. 7 1/2 ին) մեկնեցան
Րէյնլանտէն և 4 1/2 ին (9 ին) հոս հա-
սան: Երկու կայսրք իրարմէ բաժնուած
ժամանակին սրտագին սիրով զիրար
համբուրեցին: Անգլանդի կայսրը նաեւ
Աւստրիոյ ժառանգ կայսրորդին համբու-
րեց և Անտրաքի կոմսին ալ ձեռքը թոթ-
վեց:

Փարիզ 8 յուլիս.
Հանրապետութեան նախագահն այս-
սօր ընդունելութիւն ըրաւ Յունաստանի
Թագաւորին և թագուհոյն, ինչպէս
նաեւ Ռուսիոյ կայսրը եղբայր Կոստան-
դին մեծ դուքսին:

Աթէնք 9 յուլիս.
Պատերազմի ասպարէզէն լուրերը
արտատանջ անհամբերութեամբ կ'սպաս-

ւին քաղաքի մէջ, և թշնամութեանց վե-
րաբերեալ հեռագրաւորները մեծ ջերմու-
թեամբ կը մեկնուին:

Միշտ ցարդ յուզմունք բնաւ չծաղե-
ցաւ երկրի մէջ:

Ամեն հայրենասէրը՝ Թուրքիոյ հետ
բարեկամական յարաբերութեանց անհղծ
պահուիլը կը պահանջեն:

Ընդ. Բոնո.	40 7/16
Իրի.	1865 11 1/2
»	1869 40 3/8
»	1874 16
»	1872 48 1/4
»	1873 40 1/2
Եղիպոս.	39
Անգլ. Բոնո.	93 13/16

Իրիւրիս 8 յուլիս
Ռապակ Միտիլին—Օրլէան 5 7/8—6
» Ֆայր Տօլէրա 4 1/8—
Ծախուած 4000 հակ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Բ. Դուռն հրատարակուած պաշ-
տօնական ազդ. մը կը ծանուցանէ թէ
կայսերական կառավարութիւնը՝ ներ-
կայ պարագաներէն ստիպեալ՝ տե-
րութեան ներքին և արտաքին պար-
տուց տոկոսներուն վճարումը նորէն
կը յետաձգէ. և թէ՛ յիշեալ տոկոս-
ներուն կանոնաւորապէս վճարման
համար Օսմ. Պանքային հետ համա-
ձայնութեամբ որոշած միջոցներն այն
ժամանակ պիտի գործադրին, երբոր
գործադրութեան արգելք եղող
պատճառները դադրին:

Վիտինի կառավարչին կողմէ յու-
նիս 26 թուով Բ. Դուռն եկած հե-
ռագիր մը կը ծանուցանէ թէ Հասան
պէյ դնդապետն երեք վաշտ հե-
տեակով և 300 հեծեալով Պէլկրատ-
նքի մօտ Սերպիացոց հետ կռուի
բռնուելու և զանոնք սահմանադիւն
անդին քշեր է: Այս կռուին մէջ
կայսերական զօրքերը 26 մեռեալ և
35 վիրաւոր ունեցեր են, իսկ թըշ-
նամիք 300 մարդ կորուսեր են, որոց
մէջ է նաեւ իրենց գլուխը:

Բ. Դուռը՝ Ռումանիոյ կառավա-
րութեան առաջարկութիւնն իրա-
ւացի դատելով, հրաման ղրկեց Դա-
նուբի կայսերական նաւախումբին
հրամանատարին, որ Դանուբէն վեր-
ելած ժամանակ թիմը գետին բեր-
նէն անդին չանցնին:

Մայրաքաղաքիս և գաւառաց
մէջ հանգանակութիւնները կը շա-
րունակեն ի նպաստ զինուորական
ծախուց, և տրդէն գաւառներէն
մեծամեծ գումարներ կը հասնին ի
Կ. Պոլիս:

Կիրակի օրն Ամասիայէն 3556 լի-
րա եկաւ՝ զոր նահանգին բնակիչ-
ներն հանգանակած են:

Իսկ մայրաքաղաքիս մէջ տէրու-
թեան նախարարաց հանգանակած
նպաստներուն գումարն է 6435 լիրա,
27 ձի և 50 օխայ արծաթ:

Վեհ. Սուլթանը 15000 լիրա տուաւ
իւր անձնական գանձէն, Մայր թա-
գուհին ալ 5000 լիրա:

Բ. Դուռը պաշտօնական կերպիւ
սուտ հանել կուտայ այս առաւօտ
տարածուած այն զրոյցներն, որք կը
ծանուցանեն թէ Նիշի և Նովի—Պա-
ղարի շրջակները մեծ ճակատամարտ
մ'եղեր և Սերպիացիք յաղթող ե-
լեր են:

Կայսերական կառավարութիւնը
բացորոշ հրամաններ ղրկեց զօրաց
հրամանատարներուն, որպէս զի թէ՛
կանոնաւոր և թէ՛ անկանոն զօրքե-
րը Սերպիա մտած ժամանակին

մարդկութեան պարտականութեանց
դէմ չ'զարուին ծերերու, կոնանց ման-
կանց և կռուի չ'մասնակցող խաղաղ
բնակչաց նկատմամբ: Նմանապէս տ-
նոնց արտերն ու հունձքերը յար-
դել և ի հարկին պաշտպանեն նոյն
իսկ անոնց պատմաբան հայրենակ-
ցայ դէմ:

Զօրաց հրամանատարներն հրա-
հանգ ստացած են օդն հրամաննե-
րուն գործադրութեան հսկելու և
հակառակ վարուողներն անմիջապէս
պատժելու:

Վաղըթ լրագիրը կը ծանուցանէ
թէ 1000 էն աւելի յոյնք, Օսմանեան
և Հելլենական հպատակը, Մեծ-Ե-
պարքոսին խնդրագիր տալով զէնք
խնդրեր են պատերազմի երթալու
համար, և խնդիրն ընդունուել է:

Դոհութեամբ կը լսենք թէ մեր
ազգէն ալ ռազմաթիւ երկտասարդք
կամաւոր զինուոր գրուելու փա-
փաք ունենալով, Ֆաթիհի ոստիկա-
նութեան, Սպարապետի դրան և
Պատրիարքարանի դիմեր են:

Չէթինճէէն յուլիս 2 թուով հե-
տեալը կը գրեն Եւրոպական լրագ-
րաց:

«Գարատաղի Նիքօլա իշխանին
պալատին մէջ պատարագ մատուց-
ուելէ՛ ետեւ, իշխանը՝ գումարեալ
ժողովրդեան առջև յայտարարու-
թիւն մը կարդաց, որ պատերազմին
հրատարակումը կը ծանուցանէր:

«Ժողովուրդն եւանդաբան աղա-
ղակներով «կեցցէ՛ ազգ, կեցցէ՛ զօրք»
գոչեց:

«Կէս ժամ ետքը, զօրքը պատե-
րադմի կարգաւ շարուելով, իշխանն
առնաբանութիւն մ'ըրաւ պատե-
րադմին դրօշակն ի ձեռնին, զոր դրօ-
շակին յանձնեց:

«Յետոյ զօրքը Նիքօլա իշխանին
առաջնորդութեամբ ճանբայ ելաւ
դէպի Հէրսէք:»

Դարձեալ Չէթինճէէն յուլիս 2
թուով հետեալը կը գրեն:

«Գարատաղ պատերազմի յայտա-
րարութիւն ղրկեց այսօր Թուրքիոյ:
Յիշեալ յայտարարութեան մէջ հա-
մառօտ յայտնուած են Դրան դէմ
գանգատի նիւթերն, որոց գլխաւորն
են Գարատաղի հարստային սահմա-
նադիւնն պաշարումը, Գարատաղի
նկատմամբ Դրան թշնամական դիտա-
ւորութիւններն և վերջապէս Հէր-
սէք մէջ անհրաժեշտ բարենորո-
գումներ գործադրելու անհնարու-
թիւնը:

Բերկրութեամբ կիմանա՞ք որ
հայազգի նշանաւոր գերդաստանաց
ոմանց տիկնայք, Եւրոպիոյ քաղա-
քակիրթ ազգաց օրինակին հետեւե-
լով, Օսմանեան տէրութեան թշնամի-
ներուն դէմ պատերազմելով վիրաւոր-
եալ զօրականաց դարմանին համար
պէտք եղած նիւթերը պատրաստե-
լու և նուիրելու նպատակաւ մասնա-
ժողով մը կազմեր են:

Յիշեալ մարդասիրական և հայ-
րենասիրական մասնաժողովին ան-
դամ գրուած են արդէն:

- Տիկին Նուրեան
- Տիկին Ստեփան փաշա
- Տիկին Ս. Ալլօր
- Տիկին Ս. Ալլաքէկեան
- Տիկին Ս. Սանտուր
- Տիկին Թ. Սանտուր
- Տիկին Նորատունկեան
- Տիկին Սլաւֆէրարի
- Տիկին Թընկըր
- Տիկին Չենոբ Էմմանեան
- Տիկին Սինապեան
- Տիկին Անտոն պէյ Մըրսըրը

- Տիկին Եռսուֆեան
- Տիկին Ռ. Տէմիրճիպաշեան
- Տիկին Խիստ Չայեան
- Տիկին Լուսեան
- Տիկին Խորասանճեան
- Տիկին Գազապեան
- Տիկին Մէրեթմէյուրի
- Տիկին Յ. Տափուտեան
- Տիկին Յ. Սաքըզ
- Տիկին Կ. Շահպազ:

Համանու նայելով, տէրութեան
նախարարաց ընտանիքներն ալ լսե-
լով հայ տիկնանց այս հայրենասիրա-
կան գործը, փափաքեր են իրենք
ալ անդամակցել օդն մասնաժողովին,
նմանապէս կը լսենք թէ մեր ազգէն
ուրիշ ռազմաթիւ տիկնայք ալ ան-
դամակցելու փափաք կը յայտնեն:

Մասնաժողովն այսօր կամ վաղը
շրջաբերալանաւ մը պիտի յայտնէ
իւր անդամաց՝ պատրաստուելիք նիւ-
թոց տեսակներն և յանձնուելու տե-
ղերը:

Մասնաժողովն որոշած է հրատա-
րակել ապագային մէջ այն անդամաց
անուններն՝ որք իրօք օժանդակեն
այս մարդասիրական գործին:

Գահիրէէն գրուած հեռագիր մը
կը ծանուցանէ թէ Եգիպտոսի Խոթի-
վին փեսայ և հասարակաց կրթու-
թեան նախարար Թոսուն փաշան
վախճանել է:

Շարաթ օրը 700 Գարատաղիք
Լոյտի շողենաւով մայրաքաղաքէս
ճանբայ ելան իրենց երկիրն երթո-
ւա համար:

Ուրախ սրտիւ կը ծանուցանենք
թէ Վեհ. Սուլթանը՝ Մեծ. Ապտուլ-
լահեան եղբարց կայսերական ֆո-
թոկրաֆի տիտղոսն ու պաշտօնը վե-
րահաստատեց յատուկ հրամանագ-
րով, և միանգամայն իւր կայսերա-
կան թուղթան շնորհեց անոնց:

Հասունեան Գերապայծառն՝ որ
չորս տարիէ ի վեր մայրաքաղաքէս
տարագրեալ ըլլալով Հոմ կը նստէր,
Վեհ. Սուլթանին գահակալութեան
առթիւ հրատարակուած ներուժէն
օգուտ քաղելով՝ հինգշաբթի օրը
Կ. Պոլիս վերադարձաւ:

Կըսուի թէ հակահասունեաններ
ընէն շատեր գոհ եղած են Գեր. Հա-
սունեանին վերադարձէն՝ յուսարով
որ այս առթիւ Կաթոլիկ Հայաց եր-
կու կուսակցութիւնները կը յաջողին
իրաւախօս ըլլալ, որուն երկու կողմէն
ալ տրամադրութիւն կերելի եղեր:

Լէվանթ Հէրալտ լրագիրը Բեդ-
րըպուրկէն ստացած նամակէ մ'առ-
նելով կը ծանուցանէ թէ Բ. Դրան
երկու նախարարներն սպաննող Չէր-
քէզ Հասանին եղբայրը՝ Ռուսիոյ կայ-
սերական անձնապահ զօրաց գում-
բին մէջ ծառայող զինուոր մ'է ե-
ղեր:

Իզմիրէն կը գրեն թէ անցեալ
շաբաթ օրը կառավարութեան բան-
տէն յիսուն և հինգ ոճրագործք՝
բանտապանն և չորս ոստիկանութեան
զինուոր սպաննելով՝ փախեր են: Ան-
միջապէս մօտակայ զօրանոցներն ի-
մաց տրուելով զօրակոնք փախտե-
լից ետեւէն ինկեր են, որոցմէ ոմանք
զէնք ձեռք ձգած ըլլալով դիմադ-
րութիւն ըրեր, և ասկէց ծագած
կռուին մէջ երկու բանտարկեալք
սպաննուել և 15 վիրաւորուել են:
Մնացեալներն ալ բացի 19էն՝ բռնուել
են: Փախչողներուն ամենն ալ Թուրք
էին:

Իզմիրի նաւահանգստին մէջ սպա-

սող Աստուրիական շոգեհաններուն մէկուն շոգեշարժ մակոյլը Հալաք - Բունարէն ջուր բերելու երթալով Միլի հրումանդանին առջև խրել, և մեքենայն սլայթելով, մէջը գտնուող նաւաստինքէն 139 մեռեր կամ խեղդուեր են :

ԱՌՏԱՆՆԵՐԱԿՈՅՈՒՆ
ԵՍԶԱՄԸ ՈՒՄՈՒՄԻԷ

28 յունիս երկուշաբթի իրիկուն	14, 7
Կ. Պօլս 28 յունիս	
Ստեփաննայի բաժինը Սիդդիկի	1, 30
« Գոսանակութեան »	1, 15
« Պօլսոյ Պանշային »	2, 20
« Քրէտի Ժէնէրալ »	2, 5
« Քրէտի Օսթրո-Թիւրք »	
« Երկրորդական »	3, 32 1/2
« 1563 »	58
« 1865 »	60
« 1869 »	52
« 1872 »	18
« 1873 »	49
Թրաքիայ	1

ԸՆԹԱՅԻՆ ԳՐԱՌՈՅ
28 ՅՈՒՆԻՍ

Սիդդիկի	110 45
Նաշոյնի ուկի	88 8
Իմրուի ուկի	89 40
Գրքակի	54 30
Հինգ Քրաք	
Հինգսոց	107 45
Պրինս	139

Ա. Գ. Ա. Յ. Ն.

Նորքնոր կրօնական ժողովն եւրէկ Պատրիարքարան գումարութեամբ, իւր առաջին նիստն ըրաւ ընդ նախագահութեամբ Ս. Պատրիարք հօր, և իւր գիւտնը կողմնց հետեւեալ կերպիւր .

Աստուածատու Գեր. Խորէն վարդ. Միսիթարեան
Փոխ » Արժ. Տ. Գեորգ Արժ. րունի
Աստուածատու » Թաղար վարդ. փառապետ
Փոխ » Տ. Խաչատուր Տ. Գարրիէլեան

Բեգրապուրիէն աղագաւթ աղա Մկրտիչ Սանասարեան Ս. Պատրիարք հօր նամակ մը գրելով հաղար Բուպի (քաւպոն) կը նուիրէ վանայ Սանգընտեան աղկանց վարժարանին համար, այս պայմանաւ որ անշարժ կարուած մը գնուի իւր տուած գրամով և եկամուտն յիշեալ վարժարանին տրուի :

Ասանայէն Պատրիարքարան եւկած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Սոյ վանքէն գողութիւն ըրած և բարձրագոյն հրամանաւ բանտարկութեան դատապարտեալ Գուլում ճեան Գրիգոր անուն անձ մը, այս օրերս տեղական իշխանութեան խտրէն Մէճլիսին անդամ կարգուեր, և այսպէս վանքին իրաւունքը փճացեր է : Վարչութեան փաղ. ժողովն որոշեց նախ մանրամասն տեղեկութիւն պահանջել թէ յիշեալ անձն ինչ կերպով ընտրուեր և հաստատուեր է ժողովականութեան պաշտօնի մէջ : Միանգամայն յիշեալ անձին գողութեան վճռագիրը կամ վճռագրին վաւերական պատճէնը խնդրել :

Վանքի Պողոս վարդապետի դատարաններն ուրբաթ օրը փաղ. ժողովն ներկայանալով բողոքեցին աւոր վանքի երթալուն դէմ, աւարկելով թէ իրենք այն պայմանաւ հաշտուեր և իրենց դատին երկրորդ մասէն հրաժարուեր են որ յիշեալ վարդապետին երէք վանքի չերթայ : Հետեւաբար պահանջեցին դատ վարել անոր դէմ :

Փաղ. ժողովը պատասխան տուաւ թէ նախորդ վարչութեան որոշումն արդէն գործողութեան մէջ ըլլա-

ւով ներկայ վարչութիւնը չկրնար արգելադրել փաղ. ժողովն վարչութեան որոշումը գործողութեան հանդերձ, իրենց խնդիրն ալ ներկայ տողութեան կառնուել եթէ օրինաւոր կերպիւր ներկայացուի : Պողոս վարդապետին ալ իմաց տրուեցաւ թէ ժողովն արգելք չըլլաւ նախորդ որոշման համեմատ իւր վանքի երթալուն, քայց եթէ ընդհանրական ամբաստանութեանց դատարանը չաւորուակել պէտք ըլլայ, և ինքը Կ. Պօլս կանչուի, պէտք է որ հընդհանրի և անմիջապէս Պօլս դայ :

Պողոս վարդապետն ալ վարչութեան որոշմանց և հրաւիրանաց հնազանդելու պատրաստ ըլլալն յայտնելով, փաղ. ժողովն որոշեց Հալէպի երկուսական գրէկ Ս. Պատրիարք հօր կողմէ :

Այնթապէն Պատրիարքարան եւկած նամակներ տեղւոյն գալմագամին տեղիտութեանն ու ապիկարութեան վրայ գանգաւանք դրած ըլլալով, փաղ. ժողովն որոշեց Հալէպի երկուսական գրէկ Ս. Պատրիարք հօր կողմէ :

Փաղաքական ժողովն Զմիւռնիոյ գաւառական ժողովին ընտրութեան տեղեկագիրը նորընտիր քննիչ յանձնաժողովի վերաբնութեան յանձնեց :

Շաբաթ իրիկունէն ի վեր Հայ ժողովուրդեան բերանը խիստ տխուր քայց և միանգամայն տնհաւատալի զրոյցներ կը պտտին Մայր Աթոռոյ վեհ. կաթողիկոսին վրայ . զրոյցներ որոց ինչ աղբիւրէ ելած ըլլալն յայտնի է, և որոց վրայ մինչև այս առաւօտ Պատրիարքարան ալ բնաւ որ և է տեղեկութիւն մը չունի : Հետեւաբար իրաւունք ունինք հաւատարմութեան հիմնէն :

Երէկուան Լրագրին մէջ հետեւեալը կը կարդանք .

«Տասը տարիէն աւելի, իւր դատարանին ելիցն սպասելով ինքզինքը Պատրիարքարանին մէկ խորը կամար առանձնութեան ու արգելման ենթարկող, և մինչև իսկ եկեղեցի ինչեւէ ալ ինքզինքը զրկող Աթոռամարայ խաչատուր Ս. կաթողիկոսը, երեկուան օրն առաջին անգամ Ս. Պատրիարք մատոյց խաչալիւղի եկեղեցին, հոգեւորապէս միսիթարեւով թէ՛ թաղեցի և թէ՛ մինչև ցարդ նմանը չտեսնուած անթիւ անհամար բաղնիքներ եկեղեցին ու բալլը լցուող գաւառացի ժողովուրդը, որք առտուրնէ խաչալիւղ դիմած էին Ս. կաթողիկոսին պատարագին ներկայ գտնուելու ջերմեանդին փառաբանութեամբ :

«Հանդէսը խիստ կանոնաւոր, շքեղ և սրտայայտ եղաւ, մանաւանդ ըստ նուիրապետական կարգին՝ բարձր աստիճանաւորաց յիշատակութիւնը կատարուած պահուն, յորում բացարձակ լուծութեան մը միջոցին Աթոռամարայ կաթողիկոսն, առաջին Սեղանոյ, Ս. Լուսաւորչայ համագրական Աթոռոյն արժանապատեանք յաջորդ Գեորգ Գ. ընդհանուր կաթողիկոսին անունը կը յիշատակէր բարձրաձայն առաջին անգամն ըլլալով : Մեծ եղաւ ժողովուրդին խնդրութիւնն ու զոհոնակութիւնը, Աթոռամարայ մասնաւոր խնդրոյն հետ ստու և իշխանայն Աթոռոյ մէջ կեցած անհամաձայնութեան խնդրոյն ալ միանգամայն բարձրած ըլլալ տեսնելով :

«Յետ աւարտման եկեղեցւոր, Ս. կաթողիկոսն՝ ըստ հրաւիրանաց Ս. Պատրիարքին, Ն. Սրբազնութեանը

տունը գնաց ճաշելու, թէ՛ թաղեցի և թէ՛ ուրիշ թաղերէ եկող վարդապետաց և քահանայից, ինչպէս նաև Թաղ. խորհրդոյ անդամաց և ժողովուրդեան ուղեկցութեամբ :

«Հաճութեամբ կիմանամք թէ Ս. կաթողիկոսն, իրեն անուանը հաւատքի ժամանցի նուէրին մէկ մասն եկեղեցւոյ սպասարկու պաշտօնէից, և միւս մեծ մասն ալ թաղին երկսեռ վարժարանացը նուիրել բարեհաճեր է :

«Մայրաքաղաքի Գաղղ. դեսպան Պ. տը Պուրկոսն կոմսն հինգշաբթի օրը Գում Գարուի Պատրիարքարանը Ս. Պատրիարք հօր այցելութեան երթալով, Ն. Սրբազնութիւնը հոն չդրաւ նուիրուած պատճառաւ, Պատր. փոխանորդ հայրն հարկ և արժան եղած ընդունելութիւնն ըրաւ դեսպանին, որն որ մեկնելու միջոցին Մայր Եկեղեցի ալ իջաւ :

«Հանրաձայնութեամբ Զինկիլիքեան, որ հիւանդանոցը դրուած ըլլալով անցեալներն իւր հարկերը դաւանաւ համար խնդրագիր տուած էր Ս. Պատրիարքին, կիմանալով թէ չաւարթ գիշեր հիւանդանոցէն փախեր է :

Մայրաքաղաքս գտնուող պանդուխտ Բաղիշեցիք հարկերէն աւելի ստորագրութեամբ հետեւեալ աղերսագիրը մատուցին վարչութեան՝ խնդրելով որ իրենց հայրենեաց հաւորեալները խաչմանուկեան Աւետիս անուն անձի մը բռնութիւններէն ու անիրաւութիւններէն զերեւել աղատելու ճար մ'ընէ :

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք հայր և ազգախնամ Տեառք :

Միջոցներս նամակ նամակի վրայ և աղաղակ աղաղակի վրայ է որ կը տեղայ մեր զինայն, Բաղիշոյ դատարանակ հաւորեալներու հայագիր եղբայրներն, որոնք Բաղիշ հին չորսսննդներէն խաչմանուկեան Աւետիսի ձեռքէն մինչև ցայսօր կրած նեղութիւններն նկարագրելն զինի, մտովի օրերս յիշեալ անձի վերջին աստիճան անաստուած գործերուն վրայ բողոքովն յուսակոտոր լեալ օգնութիւն ի տեսնել, դժուար ի մէջ, և կարեկցութիւն ի մէջ կը խնդրեն :

Հայր Սրբազան, խաչմանուկեան ինչպէս նոյն դրութիւնը կը գրեն և կը վկայեն, ինչպէս մեր իսկ տկանատես եղած եմք նորին զնաղից և ընթացից, շատ անգամ յիշեալ չարիք մը որ չըբերեց հատցն նոյն և մեր զինայն . նորա բռնութիւնը և անիրաւութիւնը եթէ կուզէք հասկնալ և ճանչնալ, . . . խմբագրաց այս օրերս եկած նամակներ թէ՛ բարեհաճել կարդալ խառնալ, շատ քիչ թերեւ կրնաք մեր ու մեր եղբայրաց և հարց քաջած ու տեսած նեղութիւնը (այն անիրաւի ձեռքէն) ինչպէս ըսինք շատն քիչ կրնաք հասկնալ ու զիտեալ :

Հայր Սրբազան, մենք չունինք այն հանճար որ մեր կրածներ, այն կրածներ (զորս աչքը չտեսնող չէ կարող հաւատալ ընծայել) տրամաբանորէն հասկնալ զիտեալ մեր բարեբարին, մեր ազատորին, և դժբաղդաբար չունինք այն զրկել, որ ոչ թէ զիտեալու քաւ որտի՛ այլ և ոչ զտառապանաց զհարկաւորէն անդամ չեմք կարող գրել և ներկայացնել ձեզ :

Հայր խնամակալ, դեռ երկու ամիս է որ այդ անիրաւի կեղեքիչ ձեռքերէն Սահմանադրութեան շնորհիւ հազիւ ազատած ազատ մեր չունչ կառնուել, ահա նա զուն ի գործ արկեալ կը յաջողի երեք հարիւր կեղծապետի կնիքով հանրագիր մը ուղարկել առնաւ ջերմ արագնաութեան նըն՝ վանք խնդրելով ի մէջ գտաւել մեծ պաշտօն ինչ քան զինքն՝ որոյ արժանի չհամարեցաւ յընդհանուր հայ ազգութեանէ Բաղիշոյ և նորին վիճակաց, խաչմանուկեան Բաղիշոյ Գալմագամին Սրբազան

կուզէ լինել իր բարեկամաց արարեակաց և ծառայից կնիքներով, որպէս զի Պահմանադրութիւն քակէ կործանէ, չթողու որ գործադրուի Բաղիշոյ մէջ : Սյս Խաչմանուկեան կուզէ Մուսկիւն ըլլալ որպէս զի մեր աղքատիկ նկուղներու երգիքնէն էրան երած այն քիչի նուազեալ մասնաւոր կորէ վերցնէ . քայց թող զիտեալ յիշեալ բռնաւորն որ այլևս անցած է այնպիսի հանրագրաց կարեւորութիւն տալու ժամանակն . զի եթէ հարկ մը լինէր և կամ կարեւորութիւն մը տրուէր հանրագրութեան ոչ թէ այնպէս մուրացականութեամբ և սուտ իրաւ կնիքներով հանրագիր, այլ հազարաւոր կնիքներով և ձայներով կը զիմէինք առտոս Զեր սրբազնութեան . քայց զիտեալով որ սահմանադրական ժողովուրդի մը վարչական ժողովոյն ըրածն ու զրածն ազդայինեան ընդհանուրի կամքն և գիրն է, վասնորոյ յուսակց եմք որ Զեր սրբազնութիւնն այդ և այլալիս հանրագրաց բնաւ կարեւորութիւն մը չտալէն զինի՝ զարժանի կ'տեսնինք վանք խաչմանուկեան աղաւորած անուն անիւրաւ, աղաւորելով զձեր փորձիկը յայնմանէ, ուստի երեւոյթանկեալ աղաւորել և ի ծուկիս իջեալ աղերսելով կամ բառնալ զնա ի մէջ, և կամ զմեզ ի նմանէ . զի ցոյցան նա զտանի ի միջի մերում թէ պաշտօնով և թէ տնայալուստ, չէք մեզ յոյս ի կեանս մեր, և չէք մեզ լոյս ի կրօնըս մեր, միտել ամենախոնարհ ծառայք Պատրիարքին և Բաղիշոյ

Յովն տեառն 1876 յունիս 16
Ի Կ. Պօլս

Կը յուսանք որ վարչութիւնը խեղճ Բաղիշեցաց հեծութեան ձայնը լսելով վերոյիշեալ բռնաւորին ճիւղանները կը խորտակէ՝ առանց բնաւ ուշ գնելու յիշեալին թելադրութեամբ յերկրաւած ու Պատրիարքարան զրկուած կեղծապետի հանրագրութեանց :

Ս. Ա. Ա. Ս. Ա. Ս.

Միտնալ՝ Բրիտանի մոգը՝ հողով Ուս. լինեցն :
Զոր լուսատուք աշխարհի՝ բոլոր երկնային՝
Համարութիւն ու ազատութիւն՝ Օսմանեան
Անշնորհիւր գահուն պատուար կանգնեցին :
Ինձ ինքնանուէր Բրիտան ամեն հրաշալեաց,
Ոչ անտարբեր բնաւ անուն քո հընչեց :
Քեզի յաւատեան ուղիսց ցնկիրատն յորձանուս
Քո լուսափառ շաղկապ իմ սիրտս ուղեկցեց :
Տեսայ զքեզ՝ յաջող արդարութեան շանթ՝ յաշեակ
Ձա՛յ՝ յառաջելի՝ փայլն ճակտէ գամ պատմի :
Շոգա արձակել յոյս :— Ու ի միջին նշապատակ
Վերականգման հայրենեաց՝ էր աշքըդ յառած :
Հիւսիսաւունչ թէպէտ մրրիկը յուզէին
Զերաւ շաղկապ ի գործ եղալ շակալին
Արեւիկից՝ ու սպառնականք յաճէին
Մեռելագէտ՝ ճիւղալով՝ վիճածք Անցեալին :
Աւետն համար գլխով չափ վեր, դու ըզմրրիկ
Փարատեցիր և զսին ուրուս, և բաւցաւ
Շունչ քո՝ չիրմաց ըզլիսալարելն ի նոր կեանս :
Նոճեաց մէջէն Մահիկն անդէն ցուրացաւ :
Թող քո՝ արդիւնքն իսկ քեզ ըլլան մրցանակ
Եւ նմանի երգս ինքնաբոյս մէկ ծաղկի :
Զոր ծըլեցոյց արփենի շող մը մոլորած
Ի դար դարաւ լերանցամիջ եմակի :
Թ. Թերզեան

ՀՐԱՆՈՒՄ

ՍՐԱՐԱՏԵԱՆ

ԵՐԵՎԱՆ

ԽՐԻՍՏԻԱՆ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Խրիստոնէի անունն Հայ գրական... խնամքով և անհատական արտաբերութեամբ...

Կը գտնուի Ս. Դ. և Երզնկայի... խնամքով և անհատական արտաբերութեամբ...

ԿԵԱՆՔ

ՀԱՅ ՊԱՆԴԱԿԱՆ

ՅՈՐԴԱՆԱՅ

Մարտի 10-ին Երեւանի Ս. Դ. և Երզնկայի...

Կը գտնուի Ս. Դ. և Երզնկայի... խնամքով և անհատական արտաբերութեամբ...

ՊԱՏԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Մեր հայրենի իսկուհի և մեծ... խնամքով և անհատական արտաբերութեամբ...

- Ա. ին Գրիկ 40 Գրանք
Բ. » » 7 »
Գ. » » 6 »
Դ. » » 5 »

Կը գտնուի Արամեան Տպարանը... խնամքով և անհատական արտաբերութեամբ...

ՏՈՔԹՈՐ ԱՅԵՐԻ




ՍԵՐԱՆՈՒՄԵՆԻ ՀԻՐՈՊԸ

Արեւան ապականութենէ յառաջ... խնամքով և անհատական արտաբերութեամբ...

Ինչպէս որ վերոյիշեալ մորթի հիւ... խնամքով և անհատական արտաբերութեամբ...

Նաեւ եթէ քիչ մը տկարութիւն... խնամքով և անհատական արտաբերութեամբ...

Կը ծախուի ՄԻՆԱՍԻՍԻՆ և ԲՆԿԵ... խնամքով և անհատական արտաբերութեամբ...



ՇԻՐՔԵԹԻ ԽԱՅՐԻԷԻ

ՇՈՒԿԵՆԱԿԱՆԵՐՈՒՆ ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԵՐԸ

1876 ՅՈՒՆԻՍ 1 ՀԻՆԴԱՍԹԻ ՕՐԷՆ ՍԿԱՆԱԼ

ՄԻՆԱՅԻ ՅՈՒՆԻՍ 31

ԲՈՍՓՈՐԷՆ Ի ԶՈՂ ՇՈՒԿԵՆԱԿԱՆԵՐԸ

- 11 15 33 Երեւանի քաղաքի Ս. Դ. և Երզնկայի...
12 19 Երեւանի քաղաքի Ս. Դ. և Երզնկայի...
1 32 Երեւանի քաղաքի Ս. Դ. և Երզնկայի...
1 15 18 Բ. և Ա. Գալաթի Ս. Դ. և Երզնկայի...
3 15 33 Երեւանի քաղաքի Ս. Դ. և Երզնկայի...
4 15 20 Մէլիթի քաղաքի Ս. Դ. և Երզնկայի...
6 15 1 Երեւանի քաղաքի Ս. Դ. և Երզնկայի...
8 30 19 Բ. և Ա. Գալաթի Ս. Դ. և Երզնկայի...
10 22 Մէլիթի քաղաքի Ս. Դ. և Երզնկայի...

ԱՐԵՎԻԿԱՆ ԳԵՂԵՐ

- 11 30 2 Արեւիկայի քաղաքի Ս. Դ. և Երզնկայի...
12 22 Արեւիկայի քաղաքի Ս. Դ. և Երզնկայի...
12 35 3 Արեւիկայի քաղաքի Ս. Դ. և Երզնկայի...
1 10 2 Արեւիկայի քաղաքի Ս. Դ. և Երզնկայի...
1 15 22 Արեւիկայի քաղաքի Ս. Դ. և Երզնկայի...
2 20 3 Արեւիկայի քաղաքի Ս. Դ. և Երզնկայի...
3 15 22 Վանի քաղաքի Ս. Դ. և Երզնկայի...
4 30 2 Արեւիկայի քաղաքի Ս. Դ. և Երզնկայի...
10 29 2 Արեւիկայի քաղաքի Ս. Դ. և Երզնկայի...
11 40 3 Արեւիկայի քաղաքի Ս. Դ. և Երզնկայի...

ԱՐԵՎԻԿԱՆ ԵՂԵՐ

- 11 30 34 Պէլիթի քաղաքի Ս. Դ. և Երզնկայի...
Վանի քաղաքի Ս. Դ. և Երզնկայի...

Այս լրագիրը չարաքննելու համար... խնամքով և անհատական արտաբերութեամբ...

Իսկ գաւառացի մէջ հետեւեալ հոգա... խնամքով և անհատական արտաբերութեամբ...

ԻԶՄԻՐ. Ստամբուլի աղա Տէմէտեան... խնամքով և անհատական արտաբերութեամբ...

ՏՐԱՊԵՏՈՒՄ. Խաչատուր Բաղդասարեան... խնամքով և անհատական արտաբերութեամբ...

ՎԱՆ. Կարապետ աղա Նաթանեան... խնամքով և անհատական արտաբերութեամբ...

ՍԻՎԻԴՆԻՍՍԻ. Արթ. Տ. Ռուբին... խնամքով և անհատական արտաբերութեամբ...

ԻՍՏԱՆԲՈՒԼ. Տէմէտեան... խնամքով և անհատական արտաբերութեամբ...

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՑ... խնամքով և անհատական արտաբերութեամբ...

- 11 30 1 Վանի քաղաքի Ս. Դ. և Երզնկայի...
12 30 20 Պէլիթի քաղաքի Ս. Դ. և Երզնկայի...
2 15 24 Պէլիթի քաղաքի Ս. Դ. և Երզնկայի...
4 34 Պէլիթի քաղաքի Ս. Դ. և Երզնկայի...
8 30 24 Պէլիթի քաղաքի Ս. Դ. և Երզնկայի...

ԿԱՍՈՒՐԱԿԱՆ ԵՂԵՐ

ԵՐԵՎԱՆԻ ԵՂԵՐ

- 1 1 Գալաթի քաղաքի Ս. Դ. և Երզնկայի...
1 15 33 Պէլիթի քաղաքի Ս. Դ. և Երզնկայի...
2 15 20 Պէլիթի քաղաքի Ս. Դ. և Երզնկայի...
5 19 Պէլիթի քաղաքի Ս. Դ. և Երզնկայի...
6 30 24 Պէլիթի քաղաքի Ս. Դ. և Երզնկայի...
8 22 Պէլիթի քաղաքի Ս. Դ. և Երզնկայի...
9 30 33 Պէլիթի քաղաքի Ս. Դ. և Երզնկայի...
10 15 32 Պէլիթի քաղաքի Ս. Դ. և Երզնկայի...
10 40 18 Պէլիթի քաղաքի Ս. Դ. և Երզնկայի...
11 15 19 Պէլիթի քաղաքի Ս. Դ. և Երզնկայի...

ԱՐԵՎԻԿԱՆ ԳԵՂԵՐ

- 12 30 2 Ուղղակի Արեւիկայի քաղաքի...
1 5 22 Գալաթի քաղաքի Ս. Դ. և Երզնկայի...
1 15 3 Ուղղակի Արեւիկայի քաղաքի...
3 30 2 Պէլիթի քաղաքի Ս. Դ. և Երզնկայի...
9 30 2 Պէլիթի քաղաքի Ս. Դ. և Երզնկայի...
10 15 3 Գալաթի քաղաքի Ս. Դ. և Երզնկայի...
11 5 2 Գալաթի քաղաքի Ս. Դ. և Երզնկայի...
11 35 1 Պէլիթի քաղաքի Ս. Դ. և Երզնկայի...
12 3 Պէլիթի քաղաքի Ս. Դ. և Երզնկայի...

ԱՐԵՎԻԿԱՆ ԵՂԵՐ

- 2 15 34 Իսկուհի քաղաքի Ս. Դ. և Երզնկայի...
9 30 20 Գալաթի քաղաքի Ս. Դ. և Երզնկայի...
10 30 34 Գալաթի քաղաքի Ս. Դ. և Երզնկայի...
11 5 21 Գալաթի քաղաքի Ս. Դ. և Երզնկայի...
11 15 22 Գալաթի քաղաքի Ս. Դ. և Երզնկայի...

ՀՐԻՍՏԻԱՆ ԳԵՄ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ

NORTH BRITISH AND MERCANTILE INSURANCE COMPANY

ՆՕՐԹ ԲՐԻՏԻՇ ԵՆ ՄԵՐԿԱՆԹԻԼ ԻՆՍՈՒՐԱՆՍ ԿՈՄՓԵՆԻԻ... Բաժանորդագրեալ գումարը լուր 2,000,000...

NORTHERN

ASSURANCE COMPANY

ՆՕՐԹ ԶԵՆ ԵՆ ՆԵԲԻՇԻԱՆ ԻՆՍՈՒՐԱՆՍ ԿՈՄՓԵՆԻԻ... Բաժանորդագրեալ գումարը լուր 5,000,000...

Ստորագրեալ իրենց բաղաձայն յաճախողաց և այլ քաղաքացի... խնամքով և անհատական արտաբերութեամբ...

Գրեթէ ամեն կարգի վտանգաւոր ապահովութեանը... խնամքով և անհատական արտաբերութեամբ...

Վ. Ռ. ՍՈՒՐԱՆ